World Vision
ՀԱՅԱՍՏԱՆ

ՈՒԺԵՂ ԿԱՆԱՅՔ ՈՒԺԵՂ ԵՐԵԽԱՆԵՐ

Գենդերային անհավասարության խնդիրների հետազոտություն

ՈՒԺԵՂ ԿԱՆԱՅՔ, ՈՒԺԵՂ ԵՐԵԽԱՆԵՐ

Գենդերային անհավասարության խնդիրների հետազոտություն

Գենդերային անհավասարության խնդիրը երեխաների խոցելիության հիմնական պատճառներից մեկն է: Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպության հիմնական առաքելությունը խոցելի երեխաներին օգնելն ու նրանց բարեկեցությունը ապահովելն է, որի իրականացմանն էլ ուղղված են կազմակերպության հիմնական ծրագրերը: Կազմակերպության առաքելության իրագործմանն ուղղված ծրագրերը լիարժեք իրականացնելու համար դրանցում անհրաժեշտ է հստակ սահմանել գենդերային անհավասարության վերացմանն ուղղված գործողությունները:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Վորլդ Վիժն Հայաստանն իրականացրել է «Ուժեղ կանայք, ուժեղ երեխաներ» խորագրով հետազոտությունը՝ ավելի լավ հասկանալու և համապարփակ անդրադարձ կատարելու մոր և երեխաների բարեկեցության փոխկապակցվածությանը: Սույն հետազոտությունը բացահայտում է կանանց հզորացման և երեխաների բարեկեցության գործոնները Հայաստանում, ցույց է տալիս, թե ինչպես են կանանց սոցիալ-դեմոգրաֆիկ վիճակն ու հզորացումը ազդում երեխաների բարեկեցության վրա: Հետազոտությունն իրականացվել է Վորլդ Վիժն Հայաստանի ծրագրային տարածքներում՝ շահառու 11-17 տարեկան երեխաների և նրանց մայրերի մասնակցությամբ:

Կանանց հզորացման ուսումնասիրության հիմնական ցուցիչները վերաբերում են անձնային, հարաբերությունների և շրջապատի հետ փոխհարաբերության հարցերին, ինչպիսիք են օրինակ՝ ինքնագնահատականը, գենդերային հավասարությունը, վերաբերմունքը գենդերային բռնությանը, մասնակցությունը ընտանիքում որոշումների կայացմանը, տնային տնտեսության, կենցաղային իրերի և ժամանակի նկատմամբ վերահսկողությունը, բռնության ենթարկվելու հանգամանքը, առօրյա հոգսերի բաշխումը, իրավական ծառայությունների մատչելիությունը, տեղաշարժի ազատությունը և այլն: Երեխաների ուժեղությունը չափվել է այնպիսի ցուցիչների կիրառմամբ, ինչպիսիք են՝ կրթությունը, սնուցումը, պաշտպանությունը, ինչպես նաև՝ սոցիալ-հոգեբանական բարեկեցության ցուցիչները՝ դիմակայունություն, ինքնագնահատականը, կարեկցանքը, մտավոր և հոգևոր բարեկեցությունը:

ԿԱՆԱՆՑ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ

Կնոջ հզորացման առաջին փուլը տեղի է ունենում հարաբերությունների մակարդակում, սակայն այս մակարդալում կանանց հզորացմանը հասնելը շատ դժվար է, քանի որ նրանց անմիջական միջավայրը, օրինակ ՝ ընտանիքը և համայնքը, մեծ դեր ունեն այս հարցում, իսկ վերջիններս սովորաբար օգուտ են քաղում այդ անհավասար հարաբերություններից: Հետազոտությունները պարզել են, որ Հայաստանում հարցված կանանց միայն 1% -ն է հզորացված բոլոր գործոնների միջոցով: Շնորհիվ գերիշխող հայրապետական (պատրիարքալ) նորմերի ՝ կանանց որոշումների կայացումը և ակտիվների նկատմամբ վերահսկողությունը ցածր է: Հարցված կանանց միայն մեկ քառորդն է կարող ազդել որոշումների կայացման վրա, և միայն մեկ երրորդը կարող է վերահսկել ակտիվները: Ավելին, հարցված կանանց մեծամասնությունը ժամանակի նկատմամբ վերահսկողություն չունի (81%): Նրանց ուսերին են տնային ողջ աշխատանքն ու ընտանիքի անդամների խնամքը, կանայք չեն կարող այդ խնդիրները փոխանցել կամ վերաբաշխել, մինչդեռ

նրանց ամուսինները պատասխանատու են միայն վճարովի աշխատանքի համար և նվազագույն չափով են ներգրավված երեխաների դաստիարակության մեջ:

Սեռական հարաբերություններում բռնության դրսևորումները և հատկապես ընտանեկան բռնությունները գերակշռում են, իսկ կանանց 16% -ը ենթարկվում է տարբեր տեսակի բռնությունների:

Անձնային մակարդակում կնոջ հզորացումը կախված է իր սեփական անձի ընկալուլից, այսինքն՝ ինչպես է կինն ընկալում ինքն իրեն, իր բարեկեցությունը, ինչպես է պատկերացնում իր և այլ կանանց դերը հասարակության մեջ: Սրանով է պայմանավորված նաև կնոջ ընդհանուր դիմակայունությունը և առօրյա սթրեսների դեմ պայքարելու կարողությունը:

Հայաստանում անձնային գործոններով պայմանավորված հզորացված է կանանց շուրջ 41%-ը: Հարցված կանանց մեծամասնությունն ունի միջին ինքնագնահատական և լավ մտավոր/հոգևոր բարեկեցություն: Այնուամենայնիվ, հայ հասարակությունում ավանդական գենդերային դերերի հաղթահարման և ոչ սեքսիստական վարքագիծ դրսևորելու հարցերում կանայք բախվում են մի շարք մարտահրավերների և դժվարությունների: Գենդերային բռնությունն ընդունողները դեռևս շատ են և կազմում են հարցված կանանց 37%-ը, կանանց 48%-ը դեռևս պահպանում է սեքսիզմի դրսևորումներով վնասող սոցիալական նորմերն ու ավանդույթները:

Շրջապատի գործոններով պայմանավորված կանանց հզորացումն ավելի լայն իմաստ ունի և վերաբերում է հասարակության լայն շրջանակներում տարածված սոցիալական նորմերին, վարքագծին և հավատքին, ինչպես նաև՝ գենդերային զգայուն քաղաքական և իրավական շրջանակներին: Հարցված կանանց միայն 1%-ն է հզորացված շրջապատի գործոններով, և չնայած, որ Հայաստանում ազատ տեղաշարժի ազատությունը բավականին մեծ է (70%), կանանց միայն 20%-ն է ապրում քիչ գենդերային սահմանափակումներ նախատեսող նորմերով համայնքներում: Հարցված կանանց միայն 4%-ի համար է քաղաքացիական իրավունքների իրացումը մատչելի, իրավական աջակցություն կարողանում է ստանալ միայն 37%-ը:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ

Երեխաների բարեկեցությունը չափվել է հաշվի առնելով այնպիսի ֆիզիկական գործոններ, ինչպիսիք են՝ կրթությունը, սնուցումը, առողջությունը, պաշտպանությունը, ինչպես նաև մտավոր և սոցիալ-հոգեբանական ցուցիչները: Հարցված երեխաների միայն 1%-ն է բարեկեցիկ նշյալ բոլոր գործոններով: Հարցված երեխաների մեծ մասի ընկալումները սեփական կրթվածության մասին բավականին ցածր են. երեխաների միայն 9%-ն են համարում, որ գրագետ են լեզուների, թվային գրագիտության և թվաբանության ոլորտում: Հարցված բոլոր երեխաները ներգրավված են կրթական պրոցեսի մեջ և դրական վերաբերմունք ունեն կրթության նկատմամբ, ցանկանում են շարունակել այն: Առողջության և սնուցման հետ կապված հարցված երեխաների մեծամասնությունը լավ կամ միջին բազմազանության համարժեք սնունդ են ստանում:

Ինչ վերաբերում է երեխաների նակտմամբ բռնությանը, ապա հարցված երեխաների 43%-ը ենթարկվում են բռնության և շահագործման, հատկապես մայրերի և ընկերների կողմից: Երեխաների 17%-ը լսել են իրենց համայնքում սեռական բռնության մասին, իսկ 13%-ը լսել են օնլայն հարթակում բռնության ենթարկվելու դեպքերի մասին:

Ինքնագնահատականը, մտավոր և հոգևոր բարեկեցությունը, դիմակայունությունը և կարեկցանքը ձևավորում են երեխայի բարեկեցության մտավոր և սոցիալ-հոգեբանական կողմերը: Երեխաների միայն 11%-ն է գտնվում դեպրեսիվ վիճակում:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Հետազոտության արդյունքների համաձայն՝ Հայաստանում կանանց հզորացման ամենակարևոր գործոնը կրթությունն է: Բարձրագույն կրթություն ունեցող կանայք ավելի հավանական է, որ կօգտվեն տեղաշարժի ազատությունից և չեն եթարկվի սահմանափակումների՝ ի տարբերություն առավել ցածր կրթական մակարդակ ունեցողների:

Տնային տնտեսության չափը նույնպես ազդում է կենցաղային ակտիվների նկատմամբ կանանց վերահսկողության մակարդակի և սեքսիզմի դրսևորումների վրա: Մեծ տնային տնտեսություններում ապրող կանայք ավելի հաճախ են ունենում սեքսիստական մոտեցումներ և չունեն վերահսկողություն տնային տնտեսության ակտիվների վրա: Ավելի բարձր եկամուտ ունեցող կանայք ավելի լավ հոգեկան բարեկեցություն ունեն, քան ցածր եկամուտ ունեցողները:

Բացի մոր ուժեղ լինելու հետ ուղղակի կապից՝ հայ հասարակությունում երեխաների ուժեղ լինելը պայմանավորված է նաև մի շարք այլ հանգամանքներով: Չնայած սոցիալակապես խոցելի վիճակին, սեփական անձի նկատմամբ սահմանափակումներին՝ կանայք հաճախ ձեռնարկում են հնարավոր բոլոր միջոցները, որպեսզի երեխաները կրթությունից դուրս չմնան և ունենան իրենց զարգացման համար հնարավոր նորմալ միջավայր: Մյուս կողմից, կարծրատիպային մոտեցումներից զատ, նույնիսկ այն ընտանիքներում, որտեղ կնոջ՝ երեխայի մոր նկատմամբ կարող է խտրական վերաբերմունք լինել, ընտանիքի անդամներ, այնուամենայնիվ, հաճախ ջանք չեն խնայում երեխաների խնամքի, նրանց զարգացման և կրթության համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու համար:

Այնուամենայնիվ, հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ուսումնասիրության առարկա հանդիսացող գործոններով և՛ կանանց, և՛ երեխաների բարեկեցությունը ցածր է, քանի որ և՛ կանանց, և՛ երեխաների միայն 1%-ն են միաժամանակ ուժեղ ուսումնասիրված բոլոր գործոններով, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ մոր և երեխայի բարեկեցության միջև կա ուղղակի կապ: Նույնիսկ եթե երեխան առանձին գործոններով պայմանավորված ուժեղ է, դա չի նշանակում, որ ընտանիքում մեծանում է անձնային հարաբերությունների և շրջապատող գործոնների ազդեցությունը կրող ուժեղ երեխա, ով ոչ միայն սեփական կարողությունների, կրթության, ընկալումների նկատմամբ դրական վերաբերմունք ունի, այլև պաշտպանված է բռնությունից, զերծ է գենդերային կարծրատիպերով հագեցած միջավայրից և չի հանդիսանալու խտրական վարքագծի վերարտադրող: Միջավայրը, որտեղ երեխաները դաստիարակություն և խնամք են ստանում, ուղղակիորեն ազդեցություն է ունենում երեխայի արժեհամակարգի ձևավորման վրա. ընտանիքում, որտեղ մայրը ենթարկվում է բազմաթիվ սահմանափակումների, խտրական վերաբերմունքի, չի կարող երեխան զարգանալ և ունենալ այնպիսի վարքագիծ, որը զերծ է խտրական, վնասակար գործոններից, մոտեցումներից ու արժեքներից:

Ռոմանոս Մելիքյան 1, Երևան, ՀՀ
Հեռ.՝ +(37410) 74 91 19, +(37460) 49 10 10
Էլ.փոստ՝ wvarmenia@wvi.org
Վեբ-կայք՝ www.wvi.org/armenia

World Vision
ՀԱՅԱՍՏԱՆ